Եկեք միասին ստեղծենք ավելի ապահով համացանց

Վանաձորի թ 18 միջնակարգ դպրոց Անուշ Ղևոնդյան
Պլան

- Ինչ է համացանցը:
- Համացանցի ստեղծման պատմությունը(բեմադրություն):
- Համացանցի ծառայությունները(էլ. փոստ, սոց. ցանցեր, որոնողական համակարգ, ...):
- Հաղորդաշար «Համակարգիչների աշխարհում»(բեմադրություն):
- Ամփոփում-խորհուրդներ
- Համացանցին նվիրված երգի կատարում(խոսքերի հեղինակ-աշակերտուհի՝ Մ. Գրիգորյան):

Ուսուցիչ-Համացանցը մեծ դեր է խաղում մարդկանց կյանքում և հաճախ մարդիկ իրենց ժամանակի մեծ մասն անց են կացնում համակարգչի առջև :
Բարև ձեզ: Այսօրվա մեր դասի թեման համացանցն է: Մենք միասին կփորձենք պարզաբանել՝ ինչ է համացանցը, որոնք են համացանցի առավելություններն ու թերությունները, ինչպես նաև ականատես կլինենք համացանցի ստեղծման պատմությանը աշակերտների մեկնաբանությամբ, իսկ դասի ավարտին կմշակենք խորհուրդներ վիրտուալ աշխարհում ապահով լինելու համար:
Եվ այսպես ի՞նչ ենք հասկանում «համացանց» ասելով:
Աշակերտներ-...
Ուսուցիչ- Կարծում եմ, որ բոլորիս հետաքրքիր է, թե ինչպես է ստեղծվել համացանցը:

Բեմադրություն
Համացանցի ստեղծման պատմությունը մեր մեկնաբանությամբ /աշակերտներ/

Հեղինակ-Ինտերնետը համաշխարհային համակարգչային ցանց է, ինֆորմացիայի աղբյուր, ժամանցի հսկայական տարածք, հաղորդակցման միջոց, տվյալների փոխանակման համակարգ: Թերևս այսքանով չեն ավարտվում համացանցի հնարավորությունները: Իսկ երբևէ ձեզ հետաքրքրել է՝ երբ և ինչպես է ստեղծվել համացանցը:
Ինտերնետն բառն առաջացել է Interconnected Networks բառերից, որը նշանակում է իրար միացված ցանցեր: Ինտերնետ- այլ կերպ՝ համաշխարհային համակարգչային ցանց, որը միավորում է միլիոնավոր համակարգիչներ աշխարհի տարբեր ծայրերում: Իներնետ-հայերեն Համացանց:
Իսկ այժմ մտովի տեղափոխվենք 1969 թ.
Եվ այսպես 1969թ. հոկտեմբերի 29, Լոս Անջելես, ԱՄՆ: Սովորական աշխատանքային օր էր սկսվել ARPA առաջատար հետազոտական նախագծերի գործակալության գրասենյակում, որը գտնվում է Կալիֆորնիայի համալսարանի մասնաշենքերից մեկում: Նույն գրասենյակի մի խումբ անհանգիստ գիտնականների դեռևս մտահոգում է մի մի հարց՝ արդյոք այսօր կիրականանա իրենց վաղեմի երազանքը: Նրանց խնդիրն է համակարգչային ցանցով Կալիֆորնիայի համալսարանից հաղորդագրություն ուղարկել Ստենդֆորդի համալսարանի իրենց գործընկերոջը:
Ցուցադրվում է, թե ինչպես են Կալիֆորնիայի համալսարանի գիտնականները ուղարկում **LOG** բառը Ստենդֆորդի համալսարանի իրենց գործընկերոջը: Առաջին փորձը ձախողվում է, իսկ երկորդը՝ պսակվում հաջողությամբ:
Ուսուցիչ-Շատ լավ, 1969թ. հոկտեմբերի 29-ը համարվում է համացանցի ծննդյան օր, իսկ ARPANET-ը՝ համացանցի նախահայր: Իսկ այժմ նշեք, թե համացանցի որ ծառայությունից եք ավելի շատ օգտվում:
Աշակերտներ-...

Ուսուցիչ-Դուք գիտեք, որ էլեկտրոնային հասցեում օգտագործվող @ նշանը տարբեր երկրներում ունի տարբեր անուններ(նախապես պատրաստված պաստառի վրա աշակերտները տվյալ երկրի դրոշի վրա փակցնում են @նշանի համապատասխան անունը: Օրինակ՝ Հայաստանում այդ նշանին անվանում են շնիկ, իսկ Բելգիայում՝ կպչուն կապիկ):

Բեմադրություն
Համակարգչային աշխարհում

Հեղինակ-Բարև Ձեզ, սիրելի հեռուստադիտողներ, եթերում «Համակարգչային աշխարհում» հաղորդաշարն է, ձեզ հետ է Լիանա Գրիգորյանը: Քանի որ փետրվարի 11-ին ամբողջ աշխարհում նշվում է Ապահով Համացանցի օրը, այդ իսկ պատճառով այսօրվա մեր հաղորդումն ամբողջությամբ կնվիրենք համացանցին: Այսօր մեր տաղավարում կհյուրընկալենք տարբեր մասնագիտությունների

տեր անձանց, որոնց միջոցով կփորձենք պարզել համացանցի թերություններն ու առավելությունները: Եվ այսպես ներկայացնեմ այսօրվա իմ հյուրերին՝ ծրագրավորող Աշոտ Աշրաֆյան, դասախոս Էլեոնորա Աշուղյան, լրագրող Էլեոնորա Բուլղադարյան, համակարգչային խաղերի գծով մասնագետ և խորհրդատու Հայկուհի Գզողյան:

Միանգամից առաջին հարցը՝ դուք որպես ծրագրավորող բնականաբար առնչվում եք համակարգչի հետ, իսկ հաճա՞խ եք օգտվում համացանցից:

Ծրագրավորող-Բնականաբար ես հաճախ եմ օգտվում համացանցից՝ այցելելով մասնագիտական կայքեր, ինչպես նաև ազատ ժամանակ սիրում եմ համացանցում գտնել ինձ հետաքրքրող հարցերի պատասխանները:

Հեղինակ-Իսկ կարո՞ղ եք նշել համացանցի մի քանի թերություն և առավելություն:

Ծրագրավորող -Բնականաբար: Բոլորի համար գաղտնիք չէ, որ համացանցն ունի և առավելություն, և թերություն: Առավելություններից մեկն այն է, որ համացանցը հսկայական և մեծածավալ տեղեկատվության աղբյուր է: Դա նպաստում է, որ մարդիկ համացանցում գտնեն իրենց հետաքրքրող ինֆորմացիան: Սակայն սրա հետ մեկտեղ այն ունի թերություն: Քանի որ համացանցում առկա է կեղծ և ոչ հավաստի ինֆորմացիա, այն կարող է սխալ կարծիք ձևավորել տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Հեղինակ-Շատ լավ: Ուզում եմ խոսքս ուղղել դասախոս Էլեոնորա Աշուղյանին: Ինչպես գիտեք այսօր խոսելու ենք համացանցի մասին: Ուզում եմ իմանալ ձեր կարծիքը թեմայի վերաբերյալ:

Դասախոս-Ինպես նշեց ծրագրավորողը, համացանցն ունի մի շարք դրական և բացասական կողմեր: Նախ անդրադառնանք համացանացի առավելություններին: Համացանցը հնարավորություն է տալիս աշխարհի տարբեր ծայրերում գտնվող համակարգիչների միջև կատարել ֆայլերի փոխանակում, իսկ ավանդական նամակագրությանը փոխարինում է ակնթարթային հաղորդակցումն ու էլեկտրոնային փոստը:

Հեղինակ -Իսկ կարո՞ղ եք խոսել համացանցի թերությունների մասին:

Դասախոս - Տարեց տարի համացանցում ավելանում է պատրաստի ռեֆերատների, զեկույցների, գիտական հոդվածների թիվը: Ես առնչվել եմ այնպիսի դեպքերի հետ, երբ ուսանողները օգտվել են այդ պատրաստի ռեֆերատներից և դրանք հանձնել ինձ՝ նույնսիկ չծանոթանալով բովանդակությանը: Եվ այդ հանգամանքը ուսանողների մոտ առաջացնում է մտավոր ալարկոտություն:

Հեղինակ -Շատ շնորհակալություն: Խոսքս ուղղում եմ լրագրող Էլեոնորա Բուլղադարյանին: Ձեր մասնագիտությունն այնպիսին է, որ դուք կամա թե ակամա առնչվում եք համացանցի հետ: Ի՞նչ կասեք այս մասին:

Լրագրող-Դուք ճիշտ նկատեցիք, որ աշխատանքիս բնույթն այնպիսին է, որ ամեն օր առնչվում եմ համացանցի հետ, պատրաստում եմ նյութեր և տեղադրում իմ բլոգում:

Հեղինակ - Դուք նշեցիք, որ գրեթե ամեն օր առնչվում եմ համացանցի հետ, իսկ հաճախ եք ականատես դառնում համացանցում տիրող քաոսին:

Լրագրող-Ինչպես նշեցին դասախոսն ու ծրագրավորողը, համացանցում առկա են և առավելություններ, և թերություններ: Համացանցի առավելություններից մեկն այն է, որ յուրաքնաչյուրը կարող է համացանցում տեղադրել նյութ, ներբեռնել նյութեր, փոփոխել դրանք: Սակայն հաճախ նյութի հեղինակային իրավունքը խախտվում է:

Հեղինակ -Ջոն Ալեն Պաուլսն ասել է. «Ինտերնետը կարծես մի հսկայական գրադարան լինի, որտեղ բոլոր գրքերը անփութորեն թափված են»: Դուք համամի՞տ եք այս մտքի հետ:

Լրագրող -Այո, հաճախ համացանցը նմանեցնում են ինֆորմացիոն լաբիրինթոսի հետ. որտեղ մարդիկ փորձելով գտնել անհրաժեշտ տեղեկությունը՝ խճճվում են այդ լաբիրինթոսի մեջ:

Հեղինակ -Շատ լավ: Խոսքս ուղղում եմ համակարգչային խաղերի մասնագետին: Կարելի է ասել, որ համակարգչային առցանց խաղերը մեծ տարածում են գտել ամբողջ աշխարհում: 2005թ. տվյալներով մեկ խաղ մշակելու արժեքը կազմում էր մոտ 5-7 մլն. ԱՄՆ դոլլար: Այս թվերը ցույց են տալիս, որ առցանց խաղերը խոշոր բիզնեսի զարգացող ճյուղերից են: Դուք որպես համակարգչային խաղերի գծով մասնագետ և խորհրդատու ի՞նչ կասեք այս մասին:

Համակարգչային խաղերի մասնագետ-Առցանց խաղերը լոկ ժամանցի ձևեր չեն: Դրանք որոշակի դեր են կատարում մարդկանց մտավոր և սոցիալական զարգացման գործում: Երբեմն խաղացողները շփվում են այլ մշակույթի կրողների հետ և ավելի լավ ընկալում մշակութային տարբերություններն ու նմանությունները:

Հեղինակ -Դուք նշեցիք համակարգչային խաղերի բազմաթիվ դրական կողմեր: Բայց միթե՞ դրանք չունեն թերություններ:

Համակարգչային խաղերի մասնագետ -Ես իհարկե կարևորում եմ համակարգչային խաղերի դերը մարդկանց կյանքում, բայց դրանք կարող են նաև բացասան հետևանքներ ունենալ: Խաղերը երեխաների մոտ առաջացնում են կախվածություն, որը հանգեցնում է առողջական որոշ խնդիրների:

Հեղինակ -Հոգեբանները պնդում են, որ որոշ խաղերի ագրեսիվ բնույթը կապվում է երեխաների ագրեսիվության աստիճանի աճի հետ: Ի՞նչ կասեք այս մասին:

Համակարգչային խաղերի մասնագետ -Ես իհարկե չեմ կարող հերքել այն փաստը, որ համակարգչային խաղերը երեխաների մոտ առաջացնում են ագրեսիվ դրսևորումներ: Բայց ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երիտասարդներ ու երեխաների ագրեսիվության առաջացմանը ավելի շատ նպաստում է հեռուստատեսությունն ու կինոարտադրությունը, քան՝ համակարգչային խաղերը:

Հեղինակ - Շատ շնորհակալություն: Այսօր դուք նշեցիք համացանցի մի շարք առավելություններ և թերություններ: Հուսով եմ, որ դրանք կօգնեն մեր հեռուստադիտողներին, որպեսզի նրանք ճիշտ կողմնորշվեն համացանցի անծայրածիր աշխարհում: Այսպիսով, ամփոփելով մեր հաղորդումը՝ ի՞նչ խորհուրդ կտայիք մեր հեռուստադիտողներին:

Ծրագրավորող-Ծնողներին խորհուրդ կտայի, որ հետևեն համակարգչային խաղերով զբաղվելու վրա երեխայի ծախսած ժամանակին: Եվ հստակ քայլեր ձեռնարկեն, եթե դրանց պատճառով տուժում են դասերը, ակտիվ հանգիստը և այլ հետքրքրություններ:

Լրագրող -Որպես լրագրող բոլոր մարդկանց խորհուրդ եմ տալիս համացանցում տեղադրել միայն հավաստի տեղեկատվություն:

Դասախոս -Բոլոր սովորողներին խորհուրդ եմ տալիս համացանցից օգտվել անհրաժեշտության դեպքում և ավելի շատ ուշադրություն դարձնել ուսմանը:

Ծրագրավորող -Խորհուրդ եմ տալիս համացանցից օգտվող մարդկանց, որ նրանք շատ չտարվեն վիրտուալ կյանքով և չմոռանան իրական կյանքի մասին, քանի որ իրական կյանքն ավելի գեղեցիկ է և հետաքրքիր, որտեղ նրանք ունեն շատ ընկերներ ու հարազատներ, որոնց հետ շփումը տարբեր պատճառներով նվազում է: Եվ բոլոր մարդիկ իրենց համակարգիչներում տեղակայեն հակավիրուսային ծրագրեր:

Հեղինակ -Շնորհակալություն: Այսքանով այսօրվա մեր հաղորդումը մոտեցավ իր ավարտին: Ես ձեզ հրաժեշտ եմ տալիս՝ ակնկալելով, որ կրկին կհանդիպենք համակարգչային աշխարհում: Ցտեսություն:

Ուսուցիչ-Շատ լավ: Սիրելի աշակերտներ, ամփոփելով մեր դասը՝ ինչ խորհուրդ կտայիք բոլորին համացանցում առավել ապահով լինելու համար: (Աշակերտները գրում են խորհուրդներ կպչուն թերթիկների վրա և փակցնում նախապես պատրաստված պաստառի վրա):

Մեր դասն ուզում եմ ավարտել Էսթեր Դայսոնի խոսքերով. «Համացանցը նոր կենսաձև չէ, այլ պարզապես զբաղմունքի մի նոր միջոց»: Գնահատեք ձեր ժամանակը:

Երգ
Համացանցը մեր...

Համացանցը մեր մեզ հետ է միշտ,
Գիտելիքը ձեր կշտկի այն ճիշտ,
Բայց պետք է հիշել,շատ լավ հիշել՝
Նրանից պետք է ճիշտ,ճիշտ օգտվել,
Ինֆորմացիան ստացած ճշտել,շտկել,
Համացանցը մեզ շատ-շատ է օգնել:

Ես գնում եմ շատ հեռավոր մի տարօրինակ աշխարհ,
Որտեղ իշխում են կայքերը համացանցի պայծառ,
Որտեղ իշխում են զարմանքը և հատաքրքրությունը,
Ահա սա է համացանցի ստեղծման ողջ պատմությունը:

<<Վիկիպեդիա>>-ն տեղեկացնում է համացանցի մասին,
Որ այն հիշատակել է Վլադիմիր Օդոևսկին:
1969թ. ստեղծվեց <<Առպանետ>> ցանցը,
Համատեղ ուժերով՝ համակարգչային ցանցը:

Համացանցը աշխարհով մեկ է տարածված,
Հասարակության օգտագործման համար նախատեսված:
Կազմված է համակարգչային բազմաթիվ ցանցերից,
Կարծես բույն է այն հյուսված սարդոստայնի թելից:

Տվյալների փոխանցում է իրականացնում,
Արտաքին աշխարհից շատերին է այն հեռացնում:
Պարունակում է տեղեկատվական բազմաթիվ ռեսուրսներ,
Ինչպես նաև մի շարք շատ ծառայություններ:

Համացանցն ունի բազմաթիվ առավելություններ,
Իսկ դրան հակառակ՝ մի շարք թերություններ:
Զգույշ պետք է լինենք մենք համացանցի հետ,
Օգտվելու համար հատուկ գիտելիքներ են պետք:

Հասկացեք համացանցի վտանգավոր ազդեցությունը,
Ունեցեք համացանցից ճիշտ օգտվելու կարողությունը:
Այն կարող է շատ ժամանակ ձեզ շփոթեցնել,
Միայն հետո կհասկանաք,որ սխալ եք գործել:

Ձեզ ուղղված տարօրինակ նամակներին մի պատասխանեք,
Եթե ծանոթ չեք կայքին՝ մի մուտք գործեք,
Համակարգչի դիմաց շատ մի նստեցեք.
Այն խլում է առողջությունը,դուք դա լավ իմացեք:

Բայց կարող եք նաև օգտակար նյութեր քաղել,
Ձեր գիտելիքների պաշարն իսկույն ամրապնդել:
Կարող եք ձեզ անհրաժեշտ մարդկանց գտնել,ճանաչել,
Բայց հիշեք,որ համացանցից պետք չէ կառչել:

Այն աշխարհ է վիրտուալ,անիրական,
Որտեղ ոչ մի բան չկա բնական:
Զգուշացեք,որ համացանցով շատ չտարվեք,
Երկար ժամանակ նրանից օգտվելուց խուսափեք:

Համացանցով կարող եք շատ գրքեր գտնել,
Սակայն այն չի կարող մեր գրքին փոխարինել:
Այն չի կարող մեզ տալ այն ամեն ինչը,
Ինչ-որ կտան ծնողը,բարեկամը,ուսուցիչը: